# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 2

## N PDU-200-01-26
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<13>>. <<04>>. 2026թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Խ. Իգիթյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանի, հիմք ընդունելով 05.03.2026 թվականին կնքված **PDU-200-01-26** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **PDU-200-01-26** ծածկագրով գնման պայմանագրի 3.3 կետով սահմանված **242 000 000** (երկու հարյուր քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել **291 000 000** (երկու հարյուր իննսունմեկ միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **533 000 000** (հինգ հարյուր երեսուներեք միլիոն) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատու կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| **ՀՀ ներքին գործերի նախարարություն** | **«Հայփոստ» ՓԲԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 130** | **ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն** | **«Կոնվերս Բանկ» ՓԲԸ** |
| ***Հ/Հ 900011042471*** | ***Հ/Հ՝ 1930003703156000*** |
| ***ՀՎՀՀ 02882913*** | ***ՀՎՀՀ՝ 02507464*** |
| **Հեռ. 010 59-61-52** | **Հեռ.՝ (010) 544-444** |
| **Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am** | **Էլ. հասցեն՝ business@haypost.am** |
| **_______________ Խ. Իգիթյան** | **_______________ Շ. Ալեքսանյան** |
| **/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող/** | **/«Հայփոստ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն/** |
| **(ստորագրություն)** | **(ստորագրություն)** |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

*Հավելված N 1*
*<< 13 >> 04 2026թ.*
***PDU-200-01-26 ծածկագրով գնման պայմանագրի***

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 64111200/2 | Փոստային ծառայություններ՝ կապված նամակների հետ | | | | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | 291 000 000 | **291 000 000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
***Հ/Հ 900011042471***
***ՀՎՀՀ 02882913***
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**

**Խ. Իգիթյան**
**/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**«Հայփոստ» ՓԲԸ**
**ք. Երևան, 0061, Արշակունյաց 65/5**
**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
***Հ/Հ՝ 1930003703156000***
***ՀՎՀՀ՝ 02507464***
**Հեռ.՝ (010) 544-444**
**Էլ. հասցեն՝ business@haypost.am**

**Շ. Ալեքսանյան**
**/«Հայփոստ» ՓԲԸ Գլխավոր գործադիր տնօրեն/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**